

ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՄԻ ՆԱՄԱԿԻ ԵՎ ՄԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ՝ ՍԱՐԳԻՍ ՔԱՄԱԼՅԱՆԻ
ՀԱՎԱՔԱԾ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ

Մանկավարժ, բանահավաք և գրող Սարգիս Ավետիքի Քամալյանը (1869—1934 թթ.) տարիներ շարունակ գյուղից գյուղ շրջել, հավաքել ու 1933 թ. գրել է «Ծուլավեր-Ծախումավան ազգագրական նյութեր» վերնագրով 818 էջից բաղկացած աշխատությունը և ուղարկել էջմիածին, Հայաստանի գիտական ինստիտուտին հրատարակելու համար: Սակայն այն չի հրատարակվել և աշխատության ձեռագիրը պահվում է Մատենադարանում, Ս. Տեր-Հակոբյանի արխիվային ֆոնդում: Ս. Քամալյանը այդ աշխատությունը նվիրել է «Ավագ բանահավաք Սրվանդությանը Գարեգին եպիսկոպոսին»: Կարևոր ենք համարում նշել, թե այդ ընդարձակ և կարևոր աշխատությունը ինչ գյուղներից է բաղկացած:

1. Ներածում, 2. Հեքիաթներ, առասպելներ, առակներ, զվարճալիքներ, 3. Առածներ, մասալներ, 4. Հանելուկներ պունգալներ, 5. Օրհնանք, անեծք, երդում, սպառնալիք, ողջագուրանք, շուտասելուկ, 6. Խաղերի նկարագիր, 7. Մանուկների կենցաղ, 8. Ժողովրդի կենցաղ—ա. բնակարան, նրա մասեր, բ. հագուստ, նրա մասեր, դ. կերակուր, նրա տեսակներ, 9. Ծեսեր—աղաթներ, ա. ծնունդ, մկրտություն, բ. նշանդրեք, գ. հարսանիք, դ. թաղում, 10. Պարապմունք—ա. անասնապահություն, բ. երկրագործություն, գ. այգեգործություն, 11. Կանանց զբաղմունք—ա. տնտեսություն, բ. ձեռագործ, գ. շերամապահություն, 12. Նախապաշարմունք—հավատալիք, 13. Ժողովրդական

բուժիչ դեղեր, 14. Աղոթքներ, թալիսմի գերեր, 15. Զան գյուղումներ, 16. Երգեր, տաղեր, 17. Աշուղների կարճ կենսագրականները, 18. Երեք հին դոկումենտների պատճեններ¹:

Անհրաժեշտ ենք համարում երկու խոսք ասել և մեջ բերել արժեքավոր այդ վավերագրերից երկուսը:

Առաջին վավերագիրը, որը ամբողջությամբ մեջ է բերել Ս. Քամալյանը իր աշխատությունում, Ներսես Ե կաթողիկոս Աշտարակեցու 1826 թ. օգոստոսի 7-ին Թիֆլիսից շուլավերցի Մելիք Օհանջանյանին գրած նամակն է, որով պահանջում է, որ ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ամեն կերպ օգնել ռուսական զորքին և այդ առթիվ խոստով է նաև 1812 թվականի հայրենական պատերազմի և Նապոլեոնի անփառունակ վախճանի մասին:

Ներսես Աշտարակեցին գրում է.

«Քաջատոհմիկ Մելիք Յոհաննան Մելիք Սարգսեան, սիրեցեալ ի Քրիստոս.

Մի՛ լիցի ձեզ տարակուսութիւն հանելն զգօրս Ռուսաց ի Ղարաքիլիսայէ, ի Գիւմրու, յՄիխավետ(ա)պոլէ և ի Նուխայ, զի այն ամենայն է ըստ արուեստի զինուորական կառավարութեան՝ տնօրինութիւն լի իմաստութեամբ վասն հզօրացուցանելոյ զգօրութիւն իրեանց: Օրինակ այնորիկ ունիմք զմեծն և

¹ Հայկ. ՍՍՀ Միջնադարների սովետիկ աղբյուր, Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. 72, վավ. № 1ա, էջ 23—24:

գիշակատրն, որ յամի 1812 սկսեալ ի սահմանաց Երուսիկոյ հանին զամենայն զբաղմունքին զօրաց Ռուսաց ի հարիրաւոր քաղաքաց ևս ի Մոսկով քաղաքէ իսկ, այլ ի վախճանի հոշակատր եղև հալածումն միլիոնաւոր զօրաց թշնամեաց և ամեղ յետադարձ զօրաց ռուսաց, որք ոչ միայն վանեցին զթշնամին ի սահմանաց իրեանց, այլև ոտնակոխ արարեալ զամենայն երկիր անցաւ և գրուն իսկ քաղաք աթոռոյ կայսերութեան Նապոլէոնի զՓարիզ կալան և որպէս զծառայող որ եղին ի կալանս զհինքն իսկ Նապոլէոն, որ մեռաւ մա վատարանեալ չարաչար յոյժ:

Ժամանակ այս ունի գնոյն սկսուած այժմ, այլ ոչ անագան ընկալնուցոյ հանդերձ աստուծով գնոյն վախճան և դրօշակ անպարտելի զհնուորութեան ռուսաց բարձրացի ի գլուխ պարսպաց երևելի քաղաքաց Պարսկաստանի: Առ այս ահա առաքեմ ձեզ ընդ այսմ զտպեալ ծանօթութիւնս, հատուած երկուս ի նորին բարձր գերագանցութենէ կուսակալին, մի առ զօրս ռուսաց և մի առ ամենայն բնակիչս Վրաստանու հպատակս իւրոյ կայսերական մեծութեան ռուսաց և հատուած մի տետրակաւ ի մէջ յատկապէս առ ամենայն սիրելի ժողովորդս հայոց յանձնեցեալս մերում հովուութեան, յորոց կարող էք բաւականութեան չափ տեղեկանալ ամենայն հարկաւորացն ազգի ծանուցելոյ հարազատութեան իրեանց առ թագաւոր և կայսր ամենայն ռուսաց և առ ամենայն զօրս նորին:

Անելի բան զայնս, զայս այսու ծանուցանել Ձեզ պարտ համարիմ, զի ես ինքն որպէս արքեպիսկոպոս Ձեր և առաջնորդ եկեղեցւոյ հայոց, եղևոց ամենայն սահմանս Վրաստանու, պատրաստեալ եմ ելանել ընդ կուսակալին ոչ անագան, և ցուցանել զանձն իմ օրինակ ազգին իմոյ ունելով ի ձեռս բարձրացուցեալ ընդդէմ թշնամեաց հաւատոյ և եկեղեցւոյ Քրիստոսի զկենսաւէտ նշան խաչին Քրիստոսի փրկչի մերոյ, ըստ որոյ և ձեզ ամենեցուն պարտ է այր իւրաքանչիւր վառիլ զենու և հեծելովք ձերում գեղի գալ խառնիլ ընդ զօրս ռուսաց յանցանելն մերձ առ սահմանս ձեր:

Գրեալ է. ամենայնի ժամ է և ժամանակ, ընդ որոյ և այժմ գոյով ժամանակ հալածելոյ նախ զթշնամիս, հարկ է զամենայն զգործ այլ թողուցուցանել իւրում ժամանակի և կարողութեամբ աստուծոյ վաղվադակի կործանեցեն ամենայն հպատակութիւնք զօրաց հեթանոսաց և ընդարձակեցեն ամենայն հպատակաց յաղթող կայսերութեան ռուսաց ժամանակք գործելոյ զհարկաւորսն տնական կառավարութեան իրեանց:

Ողջ լերուք և շնորհք տեառն աստուծոյ ընդ հոգւոյդ ձերում միշտ. ամէն:

Արքեպս. Հայոց Վրաստանու Ներսէս 1826, օգոստոս 7.

Հմր. 138, ի Թիֆլիզ²:

Երկրորդը՝ 1791 թվականին գրած մի վաւերագիր է, որ ասվում է, թե ինչ հարաբերությունների մեջ է եղել Օսլավերի հայ ժողովուրդը վրաց թագավորագն Իլիոնի և Աղեքսանդրի հետ³: Երրորդ վավերագրի մասին Ս. Քամալյանը գրում է. «Մեծադիր, Մետրապան երկաթե գրերով մագաղաթե ավետարանի թերթ է, երեսի լայնությունը 26 սանտ. երկարությունը 36 սանտ. իբրև վերջին թերթ, հիշատակարան է, գրված է Թամար թագուհու որդի Լաշայի թագավորության օրով, Միսիորի (Ներկա Ծամաշոնի) Զարմագանից վանքում: Ստացել եմ Արքայանց ընկեր Ս-ից, ծննդով նախնական է, չի իմանում, թե ինչպե՞ս է ընկել այս խոշոր մագաղաթե հին ավետարանը հայրական տուն, որ ամեն մի այցելող մի թերթ պոկել է, իբրև հիշատակ հետը տարել: Բարեբախտաբար ինձ բաժին ընկավ հիշատակարանը—ամենահետաքրքիր մասը, որը արտագրում եմ այստեղ»⁴:

Ս. Քամալյանը նշած հարցերից բացի, ձեռագրի հիշատակարանում գրիչը գրում է, որ հիշյալ ձեռագիրը ընդօրինակել և ալիարտել է վրաց թագավոր Լաշայի, Աղվանից Հովհաննես կաթողիկոսի և վրաց աշխարհի հազգգի զորավարներ՝ Զաքարիայի և Իվանեի պաշտոնավարությունների ժամանակ (13-րդ դար): Հիշատակարանում նշված են նաև տնտեսական հարցեր, որոնք կարևոր փաստեր են հայ-վրաց ժողովուրդների բարեկամական հարաբերությունների և տնտեսական որոշ հարցեր պարզաբանելու տեսակետից: Ահա հիշատակարանը.

«Երթեալ վաճառեաց զամենայն, զոր ինչ ունէին եւ զնեաց զմարգարիտն զայն: Սոյն արիւնակ եւ սրբագան եղբայրս այս Գրիգոր վաճառեալ զամենայն ինչս իւր զկայուն եւ զշարժուն եւ թափուր մնացեալ յամենայն ընչից, ոչինչ առեալ յումեքէ ազնականութիւն

² Նույն տեղում, թղթ. № 72, վավ. № 1դ, էջ 810—812: Նատենադարանում պահվող Ներսես Աշտարակեցու ողջ արխիվում որոնում կատարեցինք և մեզ չհաջողվեց գտնել այդ վավերագրի բնագիրը: Նույն թվականի օգոստոսի 7-ին Ներսես Աշտարակեցին մի նամակ է (№ 184) գրել նաև Հովհաննես վարդապետին, որով դարձյալ պահանջում է օգնել ռուսական բանակին, ապա խոսում է Նապոլեոնի կողմից 1812 թ. Ռուսաստան կատարած անփառունակ արշավանքի մասին: Տե՛ս Ներսես Աշտարակեցու արխիվ, թղթ. № 166, վավ. № 608:

³ Ս. Տեր-Հակոբյանի արխիվ, թղթ. № 72, վավ. 1դ, էջ 812—816:

⁴ Նույն տեղում, թղթ. № 72, վավ. № 1դ, էջ 817:

ամենահին, ոչ յիւրայոց եւ ոչ յատարաց եւ ոչ ի վանիցս, յորում աւարտեցաւ իսկ:

Այլ ստացաւ զսա յարդար վաստակոց իւրոց, մերկանալով յամենայն արդեանց, ի միտ առնելով զհրամանս փրկչին որ առ մեծատունն, վաճառել զամենայն զգոյսն եւ ստանալ զանձն յերկինս:

Նոյն արինակ սրբասնեալ եղբայրս այս ստացաւ, զսա զանձն յերկինս:

Արդ գրեցաւ եւ աւարտեցաւ սուրբ Աւետարանս ի գաւառիս Կաննո, ի ձորս, որ կոչի Միսիոր, ի վանս Զարմազանից, ընդ Հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի:

Յառաջնորդութեան տեսուն Յովհաննիսի—Աղու[ա]նից կաթողիկոսի⁵ սրբո(յ) եւ բարեսիրի, զոր տէր Աստուած ամբողջ պահեցէ, այժմ եւ յապագայսն եւ յաիտեանից բարեացն արժանի արասցէ: Յայսմ աւուրս ի թապաւորութեանս Լաշաի զոր տէր Աստուած երկարակեաց արասցէ⁶:

Յայսմ աւուրս զարավար էր Վրաց աշխարհիս Զաքարիա եւ Իսանէ արիք եւ քաջք ի պատերազմունս, զորս պահեցէ զնոսա Տէր Աստուած յամենայն փորձութենէ եւ վանեցէ զթշնամիս նոցա⁷:

Ստորե քերտմ ենք նաև այն բոլոր աշուղների անունները, որոնց մասին համատու կենսագրականներ է գրել և նրանց ստեղծագործություններից մեջ է քերել Սարգիս Քամայանը «Շուլավեր-Շահումաւան» աշխատությունում:

1. Սարգիս Քեշիշ օղի, շուլավերցի, 2. Դավիթ Քեշիշ օղի, Աղ-Լալեցի, 3. Լարիք օղի, գումբեթցի, վրացի, 4. Յաղուք օղի, շուլավերցի, 5. Նոգար օղի, Մարտիրոս, ուրուկեցի, 6. Աշուղ Հազիր Աբրահամյան, ծնվել է 1848 թ. Շուլավերում, 7. Աշուղ Ինջաի, շուլավերցի, 8. Զարգար Վանես, շուլավերցի⁸:

Աշուղական գրականությանն որոշ հարցեր պարզաբանելու և որոշ աշուղների գործունեությունները լուսաբանելու տեսակետից արժեքավոր է նաև Ս. Քամայանի «Աշուղների կյանքից և խաղերից» վերնագրով 246 էջից բաղկացած աշխատությունը, որը գրել է 1934 թ. Թիֆլիսում, ուր բավական ընդարձակ շարադրել է աշուղների կենսագրությունները և մեջ է քերել նրանց ստեղծագործությունները:

⁵ Աղվանից Հովհաննես 7-րդ կաթողիկոսը զանազակել է 1195—1235 թվականներին:

⁶ Լաշա Գեորգին վրաց թագուհի Թամարի (1184—1213 թթ.) տղան է, որը թագավորել է 1213—1222 թվականներին: Նրա թագավորության ժամանակ է գրվել հիշյալ ձեռագրի հիշատակարանը:

⁷ Նույն տեղում, թղթ. № 72, վավ. № 1դ, էջ 817—818:

⁸ Նույն տեղում, էջ 803—809:

ծություններից այդ աշխատությունում:

1. Աշուղ Հիլա Սաքի, ծնվել է 1760 թ. Ղազախի Ղալաշու գյուղում, 2. Միսկին Բուրջի, 18-րդ դարի աշուղ, 3. Աշուղ տեր Ղազար, ղազախեցի, 4. Աշուղ Սերյանի, 19-րդ դարի աշուղ, 5. Աշուղ Դավլաթ Մուրադ, 6. Աշուղ Միսի, Ղարա-Ղազար⁹, 7. Ուղուրով Կիրակոս, 8. Յաղուք օղի, 9. Վեշիշ օղի Սարգիս, 10. Նալբանդ օղի, 11. Լարիք օղի (ազգությամբ վրացի), 12. Աշուղ Գուրջի Նավե, ծնվել է Թիֆլիսում, 13. Դավիթ Քեշիշ օղի, 14. Աշուղ Էդգար օղի Սարգիս, 15. Զրհան քահանա թովագեցի, 16. Մուրադյան Գարեգին (Մելք. եպ.), 17. Աշուղ Ինջաի, ծնվել է 1804 թ. Շուլավերում, 18. Աշուղ Հազիր, ծնվել է 1848 թ. Շուլավերում, 19. Աշուղ Զարգար Վանես, 20. Աշուղ Ավագ Ավետ Ագարյան¹⁰:

Աշխատության վերջում դրել է «Հավելված-բայաթիք» վերնագրով գլուխը¹¹:

Սարգիս Քամայանը երկար տարիներ աշխատել է իբրև մանկավարժ: 1885 թվականին նրան նշանակվում են Ուտիական Նիժ գյուղում ուսուցիչ: Մանկավարժական աշխատանքի հետ նա ուսումնասիրություն է կատարում և գրում Ուտի ժողովրդի պատմությունը և նրա կենցաղը, ապա ազգագրական հարուստ նյութեր հավաքում այդ ժողովրդի վերաբերյալ և գրում «Ուտիական Նիժ գյուղի աղաթների, տոների և կենցաղի մասին, հավելված Աղվանից աշխարհի մասին» վերնագրով ուսումնասիրությունը, որը բաղկացած է հետևյալ գլուխներից.

1. Երկու խոսք, 2. Կրնուկ, 3. Նշանդներ, 4. Հարսանիք, 5. Ծընունդ և ջըրօրհներ, 6. Սուրբ Սարգիս, 7. Ս. Վարդանաց տոն, 8. Մեծ պաս, 9. Ավագ հինգշաբթի, 10. Ավագ ուրբաթ, 11. Թաթախման շաբաթ, 12. Զատիկ-ընդհանուր ճաշ, 13. Մեռելոցքի օր Նիժում, 14. Գերգեց—ս. Վրլաս, ս. Եղիշե, 15. Կրկնազատիկ Նիժի մոտակայքում, 16. Համբարձման տոնը Նիժում, 17. Ուտիական լեզվով ջան գօլում, 18. Շերամապահությունը Նիժեցոց մեջ, 19. Տօսընօրայնի մասին, 20. Տօսընօրայնի ավանդությունը, 21. Նիժեցի ծերի տանը, 22. Նիժեցի որսկանը ապանի առաջ, 23. Կուկունաար Ս-ի¹² ու-

⁹ Այս աշուղին աշակերտել է աշուղ Զիվանին:

¹⁰ Աշխատության վերջում փակցված է Աշուղ Ավետի նկարը՝ սագը ձեռքին:

¹¹ Նույն տեղում, թղթ. № 72, վավ. № 7ա, բ, էջ 8—229:

¹² Խոսքը Նուխի գավառի, Նիժ գյուղացի, Ներսիսյան դպրոցի սան, նշանավոր հայդուկ Սարգիս Կուկունյանի մասին է, որը մահացել է 1913 թ. Օրդուի բանտում:

տիերեն փակ նամակը, 24. Կուկունար Ա-ի ուտիերեն բաց նամակը,

ՀԱՎԵԼՎԱԾ

25. Աղվանից աշխարհի մասին ալանդական գրույցներ, 26. Վաչական թագավորը, 27. Զավար խան և Մելիք ուսուրը, 28. Լենկ թեմուրն ու Ազատ գեղը, 29. Ուսուրն ու Գանջու Մամադ խանը, 30. Մըկնատամի խաչը և Պարիս գեղը, 31. Կապույտ լիճը կամ Գճգ Գճը, 32. Աղվանից աշխարհի թա-

ղե կամ Խոթա վանքի, կալվածքների մասին մի դարբան¹³:

Հաղորդելով վերոհիշյալ արխիվային նյութերի մասին, որոնք արժեքավոր ուսումնասիրություններ և փաստեր են պարունակում Շուշավերի, Աղվանից աշխարհի և այլ վայրերի ազգագրության, աշուղական գրականության և այլ հարցերի վերաբերյալ, որոնց հրատարակելու վրա ենք հրավիրում մասնագետների ուշադրությունը:

¹³ Նույն տեղում, թղթ. № 72, վավ. № 8ա—գ:

